Co-funded by the European Union

Դրամաշնորհային մրցույթ

Արտակարգ իրավիճակի արձագանքման ծրագիր-առաջարկների ներկայացման հրավեր

1-ին փուլ

Ապրիլի 26, 2022թ.

«ԶԳՏՈՒՄ ավելի լավ ապագայի. համայնքների և քաղաքացիական հասարակության դիմակայունություն Հայաստանում» (STRIVE) ծրագիրը ֆինանսավորվում է Հայաստանում Եվրոպական միության պատվիրակության կողմից, այն իրականացնում է ՆԵՖ Բելգիան (NEF)՝ համագործակցությամբ չորս գործընկեր կազմակերպությունների.

• «ԱԳԱԹ» հաշմանդամություն ունեցող կանանց իրավունքների պաշտպանության կենտրոն ՀԿ,
• «ԲԼԵՋԱՆ» բնապահպանական, սոցիալական, բիզնեսի աջակցության ՀԿ,
• Կանանց զարգացման «Ռեսուրս կենտրոն» հիմնադրամ,
• «Դիլիջանի երիտասարդների համագործակցության կենտրոն» ՀԿ

STRIVE ծրագիրը նպատակ ունի բարելավել Հայաստանի ՔՀԿ-ների կայունությունը, հաշվետվողականությունը և նորարարության կարողությունները՝ հնարավորություն տալով նրանց առանցքային դեր ունենալ իրազեկության բարձրացման, ժողովրդավարության ամրապնդման գործում:

Ծրագրի շրջանակներում հայտարարվում է դրամաշնորհային մրցույթ՝ ուղղված **համայնքների և անհատների հրատապ կարիքներին՝ մեղմելու COVID-19 համաճարակի և 2020 թվականի զինված հակամարտությունների հետևանքները և դրանց հումանիտար, սոցիալական և տնտեսական հետցնցումները:**

Սույն դրամաշնորհային մրցույթին կարող են դիմել Հայաստանում գրանցված քաղաքացիական հասարակության կազմակերպությունները (ՔՀԿ-ներ): Ֆինանսավորման առնվազն 70%-ն ուղղվելու է Երևանից դուրս իրականացվող ծրագրերին:

Յուրաքանչյուր հայտ պետք է կիրառի **«մի վնասիր»** մոտեցումը ծրագրի յուրաքանչյուր փուլում՝ սկսած շահառուների կարիքների բացահայտումից մինչև նախագծում, իրականացում, ծախսերի արդյունավետություն և կայունություն:

Նշում. Յուրաքանչյուր ՔՀԿ կարող է ներկայացնել միայն մեկ հայտ կամ կարող է ընդգրկված լինել միայն մեկ կոնսորցիումում, եթե հայտը ներկայացվում է կոնսորցիումի կողմից:

Իրավասու կլինեն հետևյալ տեսակի գործողությունները.

- Կրթական աջակցություն կոնֆլիկտի պատճառով տեղահանված աշակերտներին և ուսանողներին, ովքեր գտնվում են խիստ խոցելի պայմաններում,

- Բնակարանային պայմանների նվազագույն բարելավում՝ անվտանգ արժանապատիվ կենսապայմանների չափանիշներին համապատասխանելու համար, հատկապես աջակցելով տեղահանված անապահով ընտանիքներին (բացառությամբ կապիտալ վերանորոգում/շինություն իրականացնելու համար),
- Կանոնավոր սոցիալական և կրթական գործունեություն անապահով երեխաների, երիտասարդների և կանանց համար,
- Կենսաապահովմանն ուղված ուսուցման կազմակերպում, օրինակ՝ ագրոբիզնես, գյուղ.մթերք, արհեստագործություն, փոքր առևտուր և ծառայություններ,
- Նախաձեռնություններ, որոնք ուղղված են հատկապես խոցելի համայնքների կամ մարդկանց համար պարենային անվտանգության բարձրացմանը, ինչպիսիք են համայնքային այգեգործությունը, սննդի պահեստը կամ սառնարանային տնտեսությունների վերականգնումը համայնքում բոլորին հասանելի վայրերում/տարածքներում և այլն,
- Օժանդակություն փոքր բիզնեսի կամ գյուղատնտեսական գործունեության վերսկսմանը՝ ի աջակցություն խիստ խոցելի տնային տնտեսությունների և անհատների, մասնավորապես՝ COVID-19-ի ազդեցությունից տուժածներին,
- Այլ նորարարական նախաձեռնություններ՝ ուղղված խիստ խոցելի վիճակում գտնվող անձանց սոցիալական պաշտպանության և բարեկեցության բարձրացմանը՝ մասնավորապես հաշմանդամություն ունեցող անձանց շրջանում:

Նշում. սույն դրամաշնորհը կարող է օգտագործվել որպես համաֆինանսավորում՝ լրացնելու արդեն իսկ ընթացքի մեջ գտնվող ծրագիրը հարակից գործողություններով: Կարիքները պետք է հստակ հիմնավորվեն և համաձայնեցվեն դրամաշնորհատու կազմակերպության հետ:

Բոլոր հայտերը PDF ձևաչափով հայերեն կամ անգլերեն լեզուներով պետք է ուղարկվեն հետևյալ էլ. փոստին՝ grants.armenia@neareast.org:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 2022 թ. մայիսի 22, ժամը՝ 17.00 (Երևանի ժամանակով):
Նշված ժամկետից հետո ստացված դիմումները չեն ընդունվի:

Ծրագիր-առաջարկի
ձևաչափը հասանելի է սույն հղումով՝
https://drive.google.com/drive/folders/1sGIadwvulkw6RYSeXMxBOozt_YKMcuzH?usp=sharing

Մրցույթի արդյունքում կտրամադրվի մինչև **25 դրամաշնորհ**: **Յուրաքանչյուր դրամաշնորհի բյուջեն պետք է լինի 2.500.000 – 10.000.000 (երկուսուկես միլիոնից մինչև տասը միլիոն) ՀՀ դրամ գումարի միջակայքում:** Նախագծերի նախընտրելի տևողությունը մինչև 6 ամիս է, առավելագույն տևողությունը՝ 12 ամիս:

Մրցույթի բնույթից ելնելով՝ վարչական ծախսերին հատկացվող բյուջեն՝ ներառյալ աշխատավարձերը, գրասենյակի վարձակալությունը, կոմունալ ծառայությունները և տրանսպորտը, կսահմանափակվի պահանջվող դրամաշնորհի ընդհանուր գումարի առավելագույնը 10%-ով:

Տեխնիկական բոլոր հարցերը կարող են ուղարկվել grants.armenia@neareast.org հասցեով՝ մինչև 2022 թվականի մայիսի 13-ի աշխատանքային օրվա ավարտ:

2022 թ. մայիսի 17-ին՝ ժամը 14:30-ին կկազմակերպվի առցանց

Հարց/պատասխան

https://us02web.zoom.us/j/86885526876?pwd=ZUwvV0IvVlYzeXRoZkZ2L05LTmhKZz09

ՆՇՈՒՄ

- Ծրագրերի մեկնարկի ակնկալվող ժամկետն է՝ 2022թ. հուլիսի 15-ը:
- Կապ կհաստատվի միայն առաջին փուլ անցած ծրագրերի հետ: